

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 թվականի
Պոլիտիկոյ համար տարեկան 10 գրամ
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի » տարեկան 12 »
» » վեցամսեայ 6 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Redaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր և յաւմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անող-
ջովին կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեկ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԱԶԳ

Իրաւունք կը ծախուի օթել Սօ-
ֆիաի տակ ծխաւաճառ Պ. Յակոբ
Կ. փոքրաւորեանի, Սասուն սրճա-
րանի ծխաւաճառ Պ. Վահան Սն-
տոնեանի, Սուսալլա գուռու գահ-
վէճի Պ. Յակոբ Կէօզիւպէօյի և Ե-
րանի և Ապտիւրրահման մէկի թին
դէմ Պ. Ա. Զարբհանէի եւնի քով
ի վաճառ:

ԵՐԿՈՒ ՇԻՏԱԿ ԽՕՍԻ

(Նամակ խմբագրութեան)

Այս էջերուն մէջ այնքան յա-
ճախ հրատարակուած խմբագրա-
կան ազդեր բաժնեգրներու և ա-
նոնց վճարման մասին՝ հետաքրք-
րութիւն չարժեքին իմանալու նիւ-
թական կացութիւնն իրաւունքի
որ Պոլիտիկոյ ամէն հայաբնակ
քաղաքներն ու գիւղերը կը թալ
և յաջողած է բաւական ժողովր-
դականութիւն շահիլ, ինչպէս ա-
ռիթ ունեցած եմ հաստատելու
զանազան պարագաներու մէջ:

Արդեւք այն հետազոտութեանց
զորս կատարեցի հետաքրքրու-
թիւնս գոհացելու համար՝ սա ե-
ղաւ որ իրաւունք նիւթապէս
չառնեղ դրութեան մէջ կը զբա-
նուի, որովհետեւ բաժնետիրքն-
րու պատկառելի թիւ մը մինչեւ
Նոյեմբեր 9 չէ վճարած իր բաժ-
նեգրներ, զոր սակայն պարտ էր
կանխիկ վճարել, այսինքն յուն-
ուարի մէջ:

Այս կարգի բաժնետիրքները կը
մտածեն անշուշտ թէ քանի որ
մեր մէջ ձրի լրագիր կարգաւ
իսկ ներքին, անմեղադրելի բան
մըն է, մեծագոյն իրաւամբ պէտք
է ներքին համարել նաեւ թերթի
մը բաժնեգրները վճարողն 8-10
ամիս և աւելի հոգը հատուցա-
նել, ինչ կը լայն փոխանակագիր
մը չէ զոր պիտի վճարենք, հե-
տեւաբար հարկ չկայ օր օրին դը-
րամը պատրաստելու և տալու:
Խմբագիրը վաճառական չէ, ոչ
ալ իր պահանջած ապրանքի մը

փոխարժէքը, վերջապէս մոռնա-
ծեր ժը թուղթ չէ՝ մեղի տը-
ւածը. թող համբերէ, կամաց
կամաց, օր մը կը վճարենք:

Իբրեւ իրաւունքի համակրող
մը, որ լիովին կը մընէ անոր կա-
րեւորութիւնը Պոլիտիկոյ հայ
գաղթականութեան համար և հե-
տեւաբար ջերմապէս կը բաղձայ
անոր յարատեւութեան, պարտա-
կանութիւն մը կը համարիմ քա-
նի մը խօսք ըսել այդպէս մտա-
ծողներուն՝ հասկցնելու համար ի-
րենց թէ լրագրութեան մասին
իրենց խորհելու կերպը ոչ միայն
աններելի և անիրաւ է, այլ և
փաստակար հանրային օգտին տե-
սակէտով:

Լրագիրը մտային և ֆիզիքա-
կան աշխատութեան արդիւնք մըն
է. այս երկու տեսակ աշխատու-
թիւններն ալ իրենց վարձատրու-
թիւնը կը պահանջեն, գոնէ չա-
փաւոր, համեստ վարձատրութիւն
մը: Որքան վաճառականը իր տը-
ւած ապրանքին, նոյնքան խըմ-
բագիրը իր տուած թերթին
փոխարժէքը ժամանակին ստանա-
լու իրաւունք ունենայ: Տարբե-
րութիւն մը չիկայ ինքնին երկու-
քին միջեւ: Երկուքին ալ հայ-
թայթածը ապրանք է, այսինքն
մտային և ֆիզիքական աշխատու-
թեան արդիւնք, զոր կը գնէ ով
որ պէտք ունի: Երկուքն ալ դը-
րամագրուի մը ունին, մէկինը
զրամ, միւսինը մտային պաշար:
Ինչ կը նշանակէ ուրեմն երկու-
քին միջեւ տարբերութիւն գնել
վճարման մասին: Անիրաւութիւնը
բացորոշ է:

Բայց ասկէ աւելին կայ: Ա-
նոնք որ թերթ մը կը ստանան
ու չեն վճարեր, կամ վճարումը
տարօրինակ կերպով կը յետաձ-
գեն՝ ուղղակի փաստակար կը դառ-
նան հանրային օգտին նուիրուած
ձեռնարկի մը, ինչպէս է լրագրի
մը հրատարակութիւնը:

Խմբագրութիւնը բնականաբար
իր բաժնետիրք կը նկատէ անոնք
որոնք իր թերթը կը ստանան
չարունակաբար, և իր բաժնետիրք-
ներուն թիւին համաձայն կընէ
իր հաշիւները, կը ջանայ ըստ

այնմ նոր բարեփոխման մտցնել
գործին մէջ, ընդարձակել թեր-
թին ծաւալը, կամ աւելցնել հրա-
տարակելի թերթերուն տարեկան
թիւը, ինչպէս ըրաւ իրաւունքի
խմբագրութիւնը՝ նախապէս որո-
շուած շաբաթական մէկ թերթն
ու մէկ յաւելուածը երկու թերթի
վերածելով ապրիլ սկիզբէն՝ ա-
ռանց բաժնեգրներն վրայ յաւելում
մը ընելու:

Սակայն մինչ այս մինչ այն
բաժնետիրքները որոնք իրենց
պարտքը չեն ճանաչար կամ մինչեւ
տարեշրջանին տասնմէկերորդ ա-
միսը կը յապաղեցնեն վճարումը,
անխղճօրէն սաստիկ հարուած մը
տուած են լրագրին, անոր ծախ-
քերուն մէջ նշանակելի բաց մը
գոյացնելով և այսպէս պող ջուր
մը սրսկելով խմբագրութեան և
իր աշխատակիցներու հոռագին
վրայ:

Եթէ հետեւածք միայն խմբա-
գիրներուն անձնական փաստը ըլ-
լար, հոգ չէր. սակայն հանրօ-
գուտ գործի մըն ալ փաստած և
գուցէ անոր գոյութիւնն ալ վը-
տանգած եղան վճարելու դըժ-
կամակող բաժնետիրքներ, ինչ
պէտք ունէիք, պարոններ, կա-
մաւ դառն յուսախաբութեան մը
կենթադրելով վճարել խոստանալով—
զի թերթը ընդունել կը նշանակէ
այդ խոստումն ընել—և չի վճարե-
լով: Դժուար բան մըն էր լրա-
գիրը ետ դարձնել. կը բաւէր
բաւ մը միայն ըսել զայն բերող
թղթատարութեան ցրուելին—
«կը մերժան», ու այն ժամանակ
խմբագրութիւնը պիտի գիտնար
իր հաշիւն ու իր ընելիքը:

Այս չէ՝ ուղղամտութիւնը, ար-
դարութիւնը, իրաւունքը:

Վաճառ 10 Նոյ. Մ. Մ.

ՍԼԻՎՆԻՑԱ

Անցեալ շաբաթ օր ամբողջ
պուլկարական երկիրը ազգասիրա-
կան արդարացի հպարտութեան
նոյն գագաթնամբ տողորուած, ա-
ռանց կուսակցական խնդիրներու,

մէկ սրտի պէս ուժգին բաբախում
ներով կը տրոփէր, Դանուբէն
սկսեալ մինչեւ Պալգաններէ ան-
դին:

Սլիվնիցայի տարեգարձն էր.
ազգային մեծ օր, ուր նորակազմ
արի բանակ մը իր անդրանիկ յաղ-
թանակը կը տանէր զինքը մագ-
նիստացնող քաջ իշխանի մը առաջ-
նորդութեան ներքեւ:

Գիտենք թէ Սերպիոյ հետ պա-
տերազմը ոչ հողային և ոչ ալ
դրամական ու է փոխարինութիւն
չարտադրեց յաղթողին: Թէեւ
անուրանալի է ու հաստատուած
թէ Սերպիոյ մեղայի եկաւ և թէ
Պուլկար բանակը, առանց Աւս-
տրիոյ սպառնական արգելքին,
անվրէպ Պէլկրատ պիտի մտնէր,
այլ սակայն վիտինի կողմերը Սեր-
պերու տարած քանի մը անշան
յաջողութիւնները հաւատարակչիւ
համարուեցան և հաշտութեան դաշ-
նագիրը, գուցէ եզական իր տե-
սակին մէջ, մեկ յօդուած մը միայն
պարունակեց, որ, պատերազմը
գրեթէ չնդեալ համարելով, խա-
ղաղ կենցաղ մը կը տրամադրէր
երկու քոյր ազգերուն միջեւ:

Այլ ի փոխարէն՝ բարոյական
ինչ ահագին նշանակութիւն ու-
նեցաւ ան: Պուլկարները, այդ
պատերազմով, կենդանութեան և
ազգ մը նկատուելու իրաւունքի
պերճախօս ապացոյց մը տուին
ամբողջ աշխարհի. իսկ երկրին
մէջ, ինքնավարութիւնը զիրենք
ալ աւելի զօրացուց. փոխադարձ
համարումի զգացումը ծաւալեցաւ
մէջերին, զիրար աւելի սիրեցին,
վասն զի չիկայ բան մը որ այն-
քան սերտիւ իրարու միացնէ ազ-
գի մը տարրերը, որքան միահա-
մուռ ջանքով ձեռք բերուած յա-
ջողութիւնը:

Երիտասարդ ազգը արդէն փա-
ռաւոր անցեալ մը թողած ետեւէն,
փառաւոր ապագայի մը հմայիչ
հեռապատկերով արբշիւ է: Եւ
արդարեւ այն հոկայական յառաջ-
դիմութիւնը զոր իրագործեց Պուլ-
կարիան այնքան կարճ տոնէի մէջ,
կրթական, գիտութեամբ, արուես-
տական, վերջապէս՝ քաղաքակրթ-
ութիւնը մարմնացնող բոլոր ճիւ-

դերուն մէջ, այսօր զինքը մտցուցած է այն ուղին ուրկից կ'ընթացան եւրոպեան միւս ազգերը:

Մարդ կապշի երբ շուրջը դիտելով կը տեսնէ թէ երկիր մը, երբ կը կառավարուի արդարութիւնը և հայրենասիրութիւնը իրենց հիմ ունեցող սկզբունքներով վրայ, ինչպէս արագութեւն կը կերպարանափոխուի դէպ ի բարին: Մոգական գաւազան մըն է որ դուրս կը սլանայ անկից, կը շարժի, կը գործէ, կը քանդէ, կը տապալէ ամէն ինչ որ հին է, նեխած է, թրքական է և կը հաստատէ ինչ որ այս աշխարհի կեանքը հաճելի կրնայ դարձնել: Հարստահարութեան տեղ՝ բարգաւաճում: Հալածանքի տեղ՝ անդորր կեանք: զեղծումներու տեղ՝ օրէնք: Խորատեսիլ գերեզմանոցներու և զազիր աղբանոցներու տեղ՝ ակնապարար պարտէզներ, հրապարակներ, մարդկային հանճարը մարմնաւորող յիշատակարաններ: Վերջապէս՝ շուտարած և անբանացեալ մարդկային հօտի մը տեղ՝ վառվառ և կեանքով լի առողջ երիտասարդութիւն: Դժոխքի տեղ՝ արքայութիւն: . . .

Եւ այս բաները մեր հանդէսին:

Յոյժով իմ ամէնուն դէմքին վրայ կը ցոլայ:

Պուկարները որ գերազանցապէս կրօնասէր ազգ մըն են, իրենց բոլոր ուրախութիւնները խորանին առջեւ կը սկսին, և շատ աղէկ կընեն:

Քաղաքիս Սայր-Եկեղեցիին մէջ տեղ, պատերազմին յաղթապանք դրօշը, յաղթանդամ զինուորի մը ուսին յենած, կը փայ-

լի: Իր ծալքերը ամփոփած է, յաջող կուռէ մը ետքը պահ մը հանգստացող հերոսի մը պէս:

Ինչե՛ր գրուած կան այդ խորհրդաւոր և յաւէտ պաշտելի խորհրդանշանին վրայ, որուն առջեւ, իբր պաշտելի կուռքի մը, յարգանքով կը խոնարհին ժողովուրդ, պատերազմիկ և իշխան: Բանակին ոգին և առաջնորդն է ան: անոր շուքին տակ է որ զինուորը իր վերջին շունչը կ'աւանդէ: այդ մետաքսի ծուէնը կենդանի էակ մըն է գրէթէ և իբր այն՝ մասնակից է ազգին բոլոր ճակատագրերուն: Ինչպէս յաղթութեան ատեն դափնի՝ պարտութեան պարագային ալ սուգի շղարշն է իր բաժինը:

Ձօրահանպէս կայ: Յանկարծ զինուորական եռանդոտ քայլերդ մըն է որ կը թնդայ և ամենուն երակներուն մէջ ցնցումի հոսանքներ կը հաղորդէ:

Համաչափ և խորիստ քայլերով փայլուն զօրագունդն է որ կը շարժի, ոգեւորեալ անցը մը ընելով վեհապետին առջեւէն:

Չեմ գիտեր թէ Պուկար մը իսկապէս ինչ կը զգայ այդ ոգեւորիչ տեսարաններէն: Բայց հայու մը տեսակ մը հոգեկան խռովք կազդէն և կը յուզեն զայն, և այս՝ անշուշտ չար նախանձի զգացումէ մը չէ: Վի հայը միշտ անկեղծ բարեացակամութեամբ լեցուած է հանդէպ Պուկարի:

Ինչո՞ւ ուրեմն երաժշտութիւնը և զինուորներու այդ խորիստ գնացքը արցունք թափել կուտան անոր և այդ սրտաբուխ «հուրրա»ները որոնք իշխանական գերդաստանը կրող կառքերուն կ'ուղեկցին ին-

չո՞ւ տակնուվրայ կընեն իր ամբողջ էութիւնը: որովհետեւ հանրային յափշտակութեան այդ ցնծալի վայրէկանը զինքը փոխադրած է սրբոտով, մտքով, հոգիով, հոն, հեռուն, մերիններուն քով:

Ինչ կսկծալի հակապատկեր:

Այն պահուն ուր Պուկարը բերկրութեամբ կը տօնէ իր յաղթանակը, մենք տակաւին ծովածաւալ ջրաբեր, սրտածմիկ թարմ յիշատակներ միայն կը տօնենք, տրտում և գլխիկոր:

Հոս՝ ամէն վայելք, տուն, այգի, հանգիստ: Իսկ հոն՝ ոչինչ: Ինչ կըսեմ: Թշուառութիւն և հալածանք, թրքաց աւերիչ ներկայութիւն:

Ազատ ազգերու երջանիկ դուրս թիւնը մանաւանդ, զգացնել կուտայ Հայուն թէ քանի՜ քաղցր է Հայրենիք մը ունենալը որ իրապէս իրենք ըլլայ, դրօշ մը ունենալը որ իր իրաւունքներու պաշտպան բանակին մէջտեղ ծփայ, և թէ որքան զոհողութիւններ ընել կարժէ անոնց տիրանալու համար:

Չուգահեռականը ահուկի առդինքներ կուտայ մեզ համար և կերեւայ թէ այդ կատաղութեան վայրկեաններուն է որ հայը կը ծրագրէ այն յանդուգն ձեռնարկները որ «անխելքութիւն» անուանով մկրտուեցան ընդհանրապէս:

Ազգային դրութեան ճշգրիտ գիտակցութիւնը, որքան ալ դառնագրեցիկ, անհամեմատ օգուտներ ունի:

Թող հայը նախանձի, կատղի, կամ արտասուէ: միայն թէ չը յուսահատի, այլ արհամարհական նայուածք մը նետելով՝ ձախող-

ուածներու դէմ, միշտ արի և աննկուն՝ ջանայ ու աշխատի այն ճամբուն մէջ զոր ցոյց տան իրեն անձնուիրութիւնը և քաջութիւնը, փսոր մը խոհեմութեամբ համեմուած:

Գամեր-Արշաիր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Սօփիա, 7 Նոյմ.

Յայտնի է թէ քաղաքիս մէջ հրդէք ունեցած չենք այնչափ հաստատուն գաղթական հայեր ինչպէս այսօր, որովհետեւ Սօփիա ընծայած չէ այնպիսի տնտեսական պայմաններ, որոնք մասնաւոր հրապոյր մը ըլլային գաղթականութեան մը համար:

Եւ սակայն հայը հոս եւս չինած է աղօթատեղի մը իր պաշտամունքներու կատարման համար: Բուն եկեղեցին գրեթէ ստորերկրեայ, մութ և խոնավ շէնք մըն է, որուն կցելով յետոյ աւելի յարմար և բարձրագիւր շէնք մը՝ յատկացուած է կիներու:

Հին մասը կը ցուցնէ թէ տաճկի էն բարբարոս ժամանակին շինուած է, մինչդեռ նոր մասն ալ ընդհակառակը կը ցուցնէ որ ազատ Պուկարիոյ օրով շինուած է:

Սակայն դպրոց չունի Սօփիաի հայ գաղութը, որովհետեւ 6-8, առ առաւելն 10 անցած չէ այս տեղի երկսեռ հայ մանկտիին թիւը, բայց մանուկները բոլորովին երեսի վրայ չձգելու համար սովորութիւն եղած է, մինչեւ տակաւին անցեալ տարի, որ քահանան զանոնք եկեղեցիին բակը խուցի մը մէջ հաւաքելով կը կար-

քանի օրից յետոյ, երբ գիւղական միայնութիւնը, ուսուցչական ծանր հոգսերը նրան նեղեն, նա նորից կը գայ:

Բարեկամուհու անունը էլինա էր, մի բարձրահասակ, առողջ կազմածքով: Իսկացի ու բաց կապոյտ աչերով օրիորդ էր: Նա կառավարում էր իրանց գիւղի դպրոցը: Նա իսկացի ազատ մտերմով եւ կամքի տէր աղջիկ էր: Նրա մօտ գտնվում էր ամեն մի ազատ գիրք: Նա լուրջ կերպով աշխատում էր լայնացնել իր մտաւոր հորիզոնը, սակայն եւ չէր մոռանում իր կանացիութիւնը եւ կեղծ պարզութեան չէր գիմում: Լաւ խօսակից էր եւ հաճելի ընկերուհի: Մի քանի ամիս կար որ եւ նրա հետ բարեկամացել էի եւ մենք բաւական սերտ բարեկամներ էինք: Ես երբեմն գտնում էի նրանց գիւղը իրա ծնողների մօտ: գիւղը երկու ժամվայ ճանապարհ հեռու էր քաղաքից: Նա սարսափելի հակառակորդ էր թղթախաղի, մանաւանդ կանանց: Նա ասում էր որ դուք մեծ մասամբ այդ խաղացող կանանցը հաճոյք պատճառելու համար էք խաղում եւ շատ ուրիշ բաներ: . . .

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)

ԲՈՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՆԵՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱԼԻ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆԻՅ)

է.

—Նախ դրամը վերցրէք, այդ ձեռք բախտն է, եւ ես մի սանդիմ չեմ վերցնի այնտեղից, նոյնիսկ իմ տուածը, բաւական է այն որ ես տեսայ թէ ինչ կեանք կայ ձեր մէջ: գիտէք ձեռքերը ինչ էին արտայայտում, մի սարսափելի կրակ որ լափում է ամեն բան: . . . Ես միայն ձեռք աչքերին էի նայում, նրանք թէ սարսափ եւ թէ հաճոյք, անասելի հաճոյք էին պատճառում: . . .

—Նոյնը եւ ձեռք աչքերը, ասացի ես, եւ ձեռքը սեղմելով ուղեցայ հեռանալ, սակայն տիկինը ստիպեց որ դրամը վերցնեմ, ասելով՝

—Մի վախենաք, այդ դրամը ձեռք մօտ չի մնալ, դուք չուտով կը տարվէք, չը կարծէք որ այսօրվայ տարւոյնը չեն ցանկանալ իրանց վրէժը յուճել: Վերջապէս ազնիւ բարեկամներիս պահանջը կատարելով վերցրի դրամը եւ հեռացայ:

Դրամը գրպանումս ինձ այրում էր: ես ճանապարհին հազար ու մի միջոց

էի մտածում այդ վատ միջոցով ձեռք բերածս դրամից ազատվել:

Ես գրգռված նեարդերով անկողին մտայ: երկու երեք ժամ քնել չը կարողացայ:

Այդ օրվանից ես սկսեցի խաղալ, եւ ուր որ խաղում էի միշտ իմ դիմաց էր իմ բախտի ոգին՝ Կատերինան իր հրավառ աչքերով ու շիկնած այտերով: Բախտս միշտ աշող էր, խաղային դէմօնը բուն էր դրել իմ սրբուտում եւ կատերինայի աչքերում: կարճ ժամանակում ես դարձայ թղթախաղի հերոս, միայն երբեմն իմ մաքուր ներքին եսը բողբոջում էր, եւ հայոյում ինձ, եւ ես նրան պատասխանում էի՝ սպասիր, մի վախճայ, բոլորովին չեմ ընկնիր: այստեղից հեռացայ թէ չէ նոյն Ծաղիկեանը կը լինիմ, եռուն կեանքի մէջ խրված:

Մի առաւօտ ինձ մօտ հիւր եկաւ իմ բարեկամուհի վարժուհին, եւ երբ ես ձեռքս մեկնեցի նրան, նա իբր մերժեց ասելով՝

—Չեմ ուզում, ձեռք ձեռքը ազատութիւն է խաղային թղթով, ուրիշի դրամով:

Հարուածը սաստիկ էր եւ արդարացի, մի քանի վայրկեան ես ոչինչ չը կարողացայ ասել:

Մի քիչ ստիպատութիւններ արի յարգելի բարեկամուհու առաջ, բայց նա

ինձ իսկոյն լռեցրեց ասելով՝

—Թողէք, ձեռք արդարանալու փաստերը անհիմն են, կառավարութիւնը իր նպատակին հասաւ, դուք ուղղվուէք: Բարձր, հիմա թուղթ էք խաղում, վաղը կսկսէք հարբել եւ կամաց կամաց կընկնէք պատուաւոր մարդկանց աչքից, իսկ կառավարութեան աչքում կուղղուէք: կը վերադառնաք հայրենիք վերածնված, իսկ ես էլ ուրախացել էի եւ ընկերուհիներիս ասում էի, «լաւ է, մեր բանակից մի լաւ մարդ է եկել»: . . . Խօսք տուէք, որ էլ չէք խաղալ, այսպէս վերջացրեց վարժուհին:

—Խօսք չեմ տալիս, որովհետեւ այդ տեսակ կեանքում կեանք կայ, հոգու շարժում կայ, այս գիտեմ որ մաքուր կեանք չէ, բայց կեանքը մեռելութիւն չէ, լետարդեան քուն չէ: Մանաւանդ համոզված եմ որ այստեղից հեռանալուց յետոյ՝ էլ թուղթ չեմ առնի ձեռքս: Այսօր էլ ուզեցիմ կը դադարեմ, բայց այս տարին այսպէս եմ ուզում վերջացնել: . . .

Բարեկամուհին բոլորովին բարկացաւ եւ առանց միաս բարով ասելու դուրս եկաւ իմ սենեակից եւ սկսեց տանտիրուհու հետ խօսել:

Ես ետեւիցը չը գնացի, որովհետեւ գիտէի որ նա էլ չէր վերադառնալ, մանաւանդ որ համոզված էի թէ մի

դաշնէր, հայերէն գրել, կարդալ և խօսիլ կը սորվեցնէր, իրեն օգնական ունենալով ժամկոչ-լուսարարը:

Բայց երբ Պօլսոյ ջարդին վրայ այստեղ ալ եկան գողթականներ, հաստատուեցան ու գտնուեցան զաւկի տէրեր ալ, որով երկսեռ հայ մանուկներու թիւը տասնէն 15-18ի բարձրացաւ, որ ըստ ինքեան թէեւ շատ փոքր, շատ ալ մեծ եկաւ սովորական խուցին համար. միւսնոյն ժամանակ «քահանան չենք ուզեր» ի խնդիր ալ ծագեցաւ և վարժապետ-քահանան դադարեցաւ իր դասախօսութիւնները հակառակ Պատ. թաղ. խորհրդոյ այնչափ խնդրանաց և յորդորանաց. անցան ամիսներ և ահա նոյնինքն այդ քահանան եկեղեցիին մէջ ծանուց որ տիկին Ո մասնաւոր դպրոց պիտի բանայ իր տունը. ուզողը թող զրկէ զաւակը:

Բայց յետոյ, կերեւայ թէ տունը յարմար չդատուելով, դպրոցը փոխադրուեցաւ եկեղեցիին խորհրդարանը. թաղ. խորհուրդը նոյն իսկ կազմեց հոգաբարձութիւն մը երեք անձերէ. Դժբախտաբար տիկին Ո. որ առաջ ունէր պահանջներ է եղեր. հոգաբարձութիւնը 30 ֆրանք որոշեց է, որ իբր թէ չէ ընդունուեր վարժուհիին կողմէ. կըսուի թէ այս վերջինը հրաժարած է:

Հաստատուի

— — —

Շոռմիս, 7 Նոյմ.

Շոռմիսի հայութիւնը բազմամարդութեան կողմէ գրեթէ չորրորդ տեղը կը բռնէ Պուլկար հայաբնակ քաղաքներուն մէջ. բայց տնտեսապէս շատ յետադէմ վիճակ ունի. Հայը հոս մեծ մասամբ օրը օրին կապրի. կըրթական վիճակն ալ շատ տխուր հանգամանք մը կը ներկայացնէ. դըպրոցի, ընթերցարանի, բարենպաստակ հաստատութիւններու գրեթէ կարեւորութիւն չընծայուիր: Քիչ շատ բարեկեցիկ գիրք ունեցող դասակարգը աւելի ազգային պաշտօններու պղտորական տենչացողներ են քան անձնուէր աշխատողներ ու ձեռնտուներ:

Ընթերցարանի խնդիրը Շոռմիսի մէջ ալ կը ծեծուի յարաժամ: Վերջերս տեղացի և գողթական երիտասարդութիւն մը այդ գործով կըզառլի ու ամէն ճիգ կը թափէ պահպանելու համար ընթերցարանին գոյութիւնը, որ հաստատուած է դպրոցի շէնքին մէջ: Դժբախտաբար տեղացի հայութիւնը բացարձակ կը զլանայ իր նիւթական աշակցութիւնը: Նորակազմ մարմինը ուզելով քիչ մը զիւրացնել նախնական ծախքերու համար անհրաժեշտ 200 ֆրանքի գումարին հայթայթումը, կը մըտադրէ թատերական ներկայա-

ցում մը տալ քի խումբին ձեռքով: Դիմում կըլլայ վարժարանին հոգաբարձութեան որ կը հաւանի՝ պայմանով որ հասոյթին մէկ մասը դպրոցին մնայ: Վերջապէս համաձայնութիւն կը գոյանայ:

Ներկայացումը պիտի տրուի... Բայց սոմաակ գնող չըլլար. որով ներկայացումը տեղի չունենար: Ահա այս կերպով Շոռմիսի հայութիւնը կը քաջալերէ հանրագումար ձեռնարկները: Եթէ ասանկ շարունակէ, Պուլկարիոյ հայութեան այս մասը պիտի ապահովապէս փճանայ, արդարացնելով մէկ մասն այն գուշակութեան զոր իրաւունք անցեալները կընէր «Պուլկարիոյ հայութեան ապագան» խորագրին ներքեւ:

Ժամանակ է որ Շոռմիսի հայն սթափի իր թմրած այս վիճակէն:

Դիտող մը

ԼՐԱՔԱՂ

— — —

Անցեալները Մէլիքեթ կը գըրէր թէ Սուլթանը Պօլիս հրաւիրել է Անկիւհայական ընկերութեան նախագահ Ռուէսթմիսիդը ի դուքսը՝ բանակցելու համար հայաստանի բարենորոգումներու մասին. դուքսը պատասխանեց թէ ինք արքայական գերզատաւնի պատկանելուն իր այցը կրնայ քաղաքական մեծ նշանակութիւն ստանալ, ուստի իրեն տեղ կը զրկէ իր քարտուղար Պ. Հատքին. կը, որ անցեալ ամսուան վերջերս արդէն Կ. Պօլիս կը գտնուէր: Նախընթաց ուրբաթ օրուան սեւլամիլըի հանդէսին ներկայ գտնուելէ յետոյ, Պ. Հատքինը բարձրաստիճան պալատականի մը տունը կերթայ Նշան Թաշ և հոն կը յայտնէ իր պաշտօնին հանգամանքը, ըսելով թէ անգլիացիները կը փափազին որ հայաստանի քանի մը գաւառները միացուին, անանկ որ հայերը մեծամասնութիւն կազմեն հոն. իրենց վրայ տիրող կառավարիչն ու պաշտօնեային հայ ըլլան, ու քարտուղարը կաւեյցնէ թէ կուզէ Սուլթանին ներկայանալ՝ ծրագիր մը մատուցանելու: Պալատականը Եըլտըզ կերթայ ու բանը կիմացնէ. ժողով կը գումարեն՝ որոշելու համար թէ Հատքինը Սուլթանին ներկայանալու է թէ ոչ: Թերուդէմ վիճաբանութենէ հետք, կը վճռուի այդ ներկայացումն արգելիլ. և Պ. Հատքինը՝ առանց Սուլթանին երեսը տեսնելու՝ առօք փառօք կը վերադառնայ իր հայրենիքը, Անգլիա:

— Թաւմի Նոյ. 16 համարին մէջ կը կարդանք. «Կեսաբիոյ մէջ հիւանդանոց մը հիմնելու արտօնութիւնը Բ. Դոնէն առնելու համար Պօլիս գացող անգլիացիին աւելի կարեւոր ծրագիր մը ունի եղեր

Սուլթանին ներկայելու ի մասին հայկական բարենորոգումներու:»

Արդեօք սա յաւիտենական աշխրանայի ծրագիրներուն վերջը երբ պիտի գայ:

— Լա Բաքրի իր Նոյ. 17 թիւին մէջ սապէս կը խօսի Գերմանիոյ ապագայ հսկայ ծրագիրներուն վրայ. «Լաւ ըմբռնելու համար սաստկութիւնը այն պայքարին որ կը մղուի Աւստրիոյ Տեւտոներուն և Չէկերուն միջեւ, պէտք է աչքի առնել բերել որ Պոնտիս իր աշխարհագրական դիրքով ցիցի մը պէս միտուած է գերման երկիրներուն մէջ և անանցանելի պատուար մը կը ձեւացնէ գերմանական թափանցութեան: Հիւսիսի Գերմաններուն գերագոյն փառասիրութիւնն է արդարեւ աստիճանաբար գրաւել Աւստրիան և այս ազգին կատարել տալով յառաջապահի դերը, մղել զայն որ տարածուի դէպ Արեւելք, անոր տեղն անցնելու համար երբ առաջին հանգրուանները գրաւուած լլլան: Դանուբէն և անդրփոփորեան դաշտերէն անդին իսկ գերմանները որս մը կը տեսնան իրենց ճանկն անցունելիք: Գերմանական երազ մըն է Տեւտոն բարբառին հնչելը լսել Վոսփորի ափերուն վրայ: Այս կերպով կը բացատրուի Վիլհելմ Բ-ի քաղաքականութիւնը ի մասին Սուլթանի և անոր շուայած քաջալերանքներուն: Վերջերս կը կարգայի գրքոյ մը՝ «Գերմանիոյ իրաւունքները Թուրքիոյ ժառանգութեան մէջ» անուն, ուր կը տեսնուի թէ Գերմանիա աչք նետած է Միջագետքի հարուստ դաշտերուն վրայ և թէ Անատոլի երկաթուղին կը նկատէ իբրեւ միջոց ապագային այդ երկրին տիրանալու: Սկիւտարը Պարսկական ծոցին կապող երկաթուղի մը, ցամաքի ճամբով Հնդկաստանի ուղին փակուած անգլիացիներուն առջեւ և կեդրոնական Եւրոպա մը որ իրեն ձգէ աշխարհի վաճառականութեան շահերը. ահա այն աննշան բաները որոնցմով կը հրճուի մեր դրացիներու փառաստենչիկ ոգին...»

ԾԱՆՈՒՑՈՒՄ

— — —

Ռումանիոյ այն բաժանորդներուն որոնք ցարդ չեն վճարած իրենց բաժնեգիրքը, վճարման դիւրութիւն մը ընծայած ըլլալու համար կը խնդրենք որ հաճին զըրկի իրենց պարտք Տիար Թէօֆիլ Թէրզեանի ի ֆէօսթէնճէ, որ Ռումանական նամակագրոշմ ալ կընդունի դրամի տեղ:

ՀԻՆՏ ԸՍԵԱՆԸ

— — —

Հինտիսթանըն ըսեանը էլան տէվամ իթմէքտէ տիր:

Աֆղանիսթան սինօրընա եագըն Սարան - Սարտա Աֆրիթիլէրէ գարչը կիտէն պիր պէօլիւք ինկիլիզ հինտ ասքէրի տաղլար արասընտա ասըլարտան մուհասէրէյէ ալընմըլ վէ տիւլմանըն չօզլուղը սէպէպլէ պիր ինկիլիզ սաղ գալմամագ իւզրէ քիաֆէսի գըրըմըլ տըր:

Տիկէր թարաֆտան ժէնէրալ Լօգարտըն սօն թէլէկրաֆլարը ինկիլիզէրէ մէսէրէթպախշ օլուպ, պէշ գապիլէլէր ըէյիպլէրին իթաաթ կէօսթէրմէքտէ օլտըզլարընը պիտիրմիշ տիր. ֆազաթ օլապիլիքի ինկիլիզէրին հիւսիւմինի թէէլիւր իթտիրմէք, վէ պէրիտէ քէնտիլէրի հաղըրլանմագ մագսէտի իլէ, պու եօլտա պիր գուրնազլըզ իթմիշ օլտուլար. պու զաննիյաթլէ պէրապէր զայրը աւըլար գուվվէթտէն տիւլմիշ վէ լէվազիմաթլարը պիթմիշ կէօրիւնիյօր. Օրագզայ գապիլէի ճէսիմէսի հէր հալտէ եագընէն թէրքի սիլահ իթմէկէ մէգպուր տըր:

Հինտիսթանըն Եէմալի - շարգ ճիհէթիտէ խիպէր ճիվարընտա պուլընան գապիլէլէրտէ եէնի իւթիլաթ գուհուրա կէլմէքտէ իմիշ, իլք տէֆա ըսեան օլ ճիվարլարտա պաշ կէօսթէրմիշ իտի. պու սէպէպլէն օրալարա գուվվէի ասքէրիյէ ճէլպ իթմէք իչիւն թէլէկրաֆլար քէլիտէ օլտընմըլ տըր:

Ֆագիր հինտիլէր, քէնտի ճէհալէթլէրի իլէ Եըլտըզըն թէշվիգի սայէսինտէ՝ նէ հալլէրէ կիրֆթար օլըյօրլար:

ՍՈՒԼԹԱՆԸՆ ԻԹԱԱԹԸ

— — —

Աւստրիա էլիսի Մ. Գալիչէ կէչէն հաֆթա Պապը Ալիյէ սուրէթի գաթիյէտէ վէրմիշ օլտըզընթա (իւլթիմաթօմ) իլէ Մէրսին վուգուաթընտան տօլայը Ատանա վալիսինին վէ Մէրսին միւթէսարըֆընըն թարտ օլընմալարընտան մատա տիկէր իթի թէքլիֆ տախի իթմիշ իտի:

1. Վիէննատա մէրքէգի իտա. ըէսի օլան չըմէնտըֆէր չիքթէթիին թիւրքիտա պուլընան խաթթլարըն եանընտան իքինճի պիր խաթթ տախի եարտըրմագ իչիւն թիւրք հիւքիմէթիին թէչէպպիւսաթընըն թաթիլի:

2. Թիւրքիանըն պօրճը օլան 10 միլիոն ֆըրանզըն պիլաթէէլիւր վէրիլմէսի:

Աւստրիա հիւքիմէթի պու թէքլիֆլէրի իթմէլէ պէրապէր 2-3 ատէտ զըրչլը վաբօրլար Մէրսին սուլարընա եօլլամըլ վէ բէնճ. չէպիհ կիւնիւնէ գատար մէզքիւր

Թէքլիֆաթ գաղու օլընմարդ իսէ
Մէրսին շէհրինի թօրա թուծ-
մագ իշին թալիմաթ վերմիշ օլ-
տըղընտան, Պապը Ալի նէ իտէ-
ճէկինի շաշըմըշ ըտը: Նիհայէթ
Սուլթան պա իրատէ Ս: Պալիշէ-
նին թէքլիֆաթընը գաղու իթ-
մէք իշին Պապը Ալիյէ էմր վերտի
վէ Ատանա վալիսինի վէ Մէրսին
միւթէսարըֆընը մէմուրիյէթլէ-
րինտէն թարտ իտուպ, անլէրին
հէրինէ մուվազգաթէն: Շաքիր վէ
Րէշիտ բաշարը թալին էլլէտի
վէ մէճլիսի վիւքէլա 10 միլիոն
ֆրանքըն ազ պիր միտտէթ գար-
ֆընտա էօտէնմէսինի թահթը
գարարա ալտը:

Թաւն Աւստրիանըն Պապը Ալի-
յէ վերտիկի իւլթիմաթօմտան պահս
իտէրէք տէմիշտիւր քի՝ միւսալէհէ
միւլէքէրաթընտա Պապը Ալիին
թուլթաղը թարիգ վէ Սթանպուլ-
տա լէվալիմաթը հարպիյէ թէ-
տարիգաթընա գաղըշմասը Թիւր-
քիանըն գուվէի մալիյէսինէ վէ
տէվէթլէրէ մէսուլ պիր հալտէ
պուլլէմասընա ասլա գըլաս օլըն-
մազ: անըն շու ահվալը նամէշ-
ըուէսի կէօթէրիյօր քի զալը
էվրոքանըն Թիւրքիայա կիւղէլ
պիր տէրա վէրմէսի իշին վազըթ
կէվիշ տիր: Իւք թէշէպպիւսի
պու տէֆա Աւստրիա իթմիշ օլ-
մասընտան տօլալը անը թէպրիգ
իթմէլիյիգ:

Պու մէսէլէտէն տօլալը Աւստ-
րիա կաղէթալարընըն Թիւրքիա-
յա գարըն գուլլանտըղարը լիսան
բէք շէտիտ տիր: պաղըլարըտէ
տէմիշ տիրքի Եուան թիւրք մու-
հարէպէսի էանասընտա տիկեր
Պալլան միւքիւմէթլէրինի Աւստ-
րիա թուլթմուշ օլուպ, Թիւրքի-
այը էն պէօլիւք պէլալարտան
գուլթարմըշ օլաղըմըղը Պապը
Ալի նէ՝ չապուպ ունուլտը:
Թիւրքիանըն ահվալը հաղըրէսի
պիւթիւն պիւթիւնէ անագրօնիզ
(զէմանա մուղարիւր) օլմաղլէ պու-
հալտէ տէվամը նաղապիլ օլուպ,
անը թէմէլիտէն թէպտիլ ու
թէմտիտ իթմէք լաղըմ տըր:

ԵՌԻՆԱՆ-ԹԻԻՐԲ ՄԻՍԱԼԵՆԵՍԻ

Աթինատան նոյեմ. 8 թարիսլի
քէշիտէ օլընան պիր թէլէկրաֆըն
պէյանընա կէօրէ, միւսալէհէ շէ-
րաթիւնին Եուան գօնօլօլարը
հաղըրտա օլան մատտէ մէպտէն
գաղու օլընմըշ իսէ տէ, անըն
թաֆսիւթը իւշ ալ գարֆընտա
պիլ միւլէքէրէ թահթը գարարա
ալընաճաղը իւշ պէրապէր՝ ասըլ
միւսալէհէ ահմամէսի պու
հաֆթա մուրախիսալար թարա-
ֆընտան իմպալանաճաղ ըմըշ:

ՄԻԻԹԵՆԵՎՎԻԵ

Բուսիա էլիսի տուի իքինճի
տէֆա օլարապ Պապը Ալիյէ պիր
նօթա վէրմէքլէ, Բուս թիւլք մու-
հարէպէսին թաղմինաթընտան
միւթէպաղը 1,500,000 լիւրալը վէ
հալսօտ անըն պիր գըմմընը թա-
լէպ իթմիշ վէ տէմիշ տիր քի՝
Թիւրքիանըն տարտա օլտըղը վէ-
ման մէպլաղը մէքքիւր իսթէնիլ-
մէմիշ իտի, ֆազաթ շիմտի լէ-
վաղիմաթը հարպիյէ թէտարի-
գաթընտա պուլլէտըղը հալտէ
Թիւրքիա պօրճընը էօտէմէլ տիր:

Շօրաի տէվէթ ազասը Յուլ-
հանէս էֆէնտի Նուրհան՝ միւ-
թէվէֆա Միքայէլ բաշա Բօր-
թուգալեանըն հէրինէ խաղինէի
խասսա նաղըրը թալին օլընմըշ
տըր:

Սուլթան մալիյէհէ էրմէնիլէր-
տէն մատա հիշ պիր միլլէթի
էմիլիյէթի օլմասըղընը պու տէֆա
տալի ըսպաթ իթմիշ տիր:

Պիր ինկիլիզ թապասը Ուր-
ֆատան Քարբերգէ կիտէհէկի էս-
նատէ տէրտէսթէ հապս օլունմըշ
օլուպ, էլիշին Պապը Ալիյէ միւ-
րաճաթը իւղէրինէ՝ սէրպէսթ
պըլաղըմըշ տըր:

Կէնճ-Թիւրքիա նամ գօմիթէ-
թինէ մէնսուպիյէթի օլմագ թէօհ-
մէթի իլէ տէրտէսթ օլընալարը
թահթը մուհաքէմէյէ ալմագ ի-
շին թաշգըլաթա պիր մահքէ-
մէյի ֆէվզէլաթի մախսուսէ թէշ-
քիլ օլընմըշ տըր:

Մուսթաֆա բաշա վէ Սթանպուլ
արաւընտա չըմէնտըֆէր խաթթը
իւղէրինէ ինկիլիզ վէ Ֆրանսըզ
բօսթա չանթալարը աղըլպ, մէք-
թուպլար վէ սալիւր էվրագ սըր-
գաթ օլընմըշ տըր: պու ուլիւն-
սըլլըք թիւրք մէմուրարըն թաղ-
սիրաթընտան հուսուլա կէլիշ օլ-
տըղընտան էլիլէր միւթթէֆիգէն
Պապը Ալիյէ պիր շէտիտ նօթա
վէրէհէքլէր իմիշ:

Նաէ Ֆրաէ Բրէսկին պէյա՝ Ե-
նա նաղարէն, թիւրք հիւքիւմէ-
թի Մէրսինտէքի Լօյտ գուն-
բանեսըն աճէնթինի թէվզըֆ իթ-
միշ օլմասընըն սէպէպի պէր վէճհի
աթի տիր:

1. Հիւքիւմէթին արգուսընա
մուղալիւր՝ էրմէնիլէր իսթինէ կի-
տէն բարալար մէրգուլ աճէնթ
սահիպէրինէ թէվիթ իտէր իմիշ:
2. Միւստօլտան հիւքէթ իտէն
էրմէնիլէրէ վարօր պիլէթլէրինի
ուճուզ վէրիւր վէ թիւրք հօլճըլա-
րընտան թարիֆէ մուճիպի բարա
ալըր ըմըշ:

Սթանպուլտան Նոյմ. 8 թա-
րիսլէ շէքիլէն թէլէկրաֆա կէօ-

րէ, քե սֆֆէ րէսմի տաիլէրին-
տէ՝ կիրիտ իսլամարը իշին իտէն
տէֆթէրի քիւշաթ օլընմըշ տըր:

Պիր մուհիմ հօվաթիա նէվին-
տէն օլարապ թէլէկրաֆլար՝ Թիւր-
քիա մէմուրարընա նոյեմբեր 8 տէ
պիրէր ալըք էօտէմիշ օլտըղընը
պիլտիրիյօրալ:

Կէշէն բաղար կիւնի ընթերցա-
րանտա վուգու պուլան թէճէմ-
միւտէ շէհրիմիզ գըրաթ հանէսինէ
պէշ քիշիտէն իպարէթ մուվադ-
գաթ պիր իտարէ թալին օլընտը:

ԳՕՆԹ ԿՕԼՈՒԻՏՎՍԳԻՆԻՆ
ՆՈՒԹԳԸ

Աւստրիա խարիճիյէ նաղըրը
Գօնթ Կօլուիտօքի Հունգարիա
մէճլիսի մէպուսանըն մուրախաս-
լարը մուվաճէհէսինտէ իրատը
նուլթ գիտէրէք Թիւրքիա հաղ-
ընտա շու հօլտա պէյանըն էֆ-
քեար էլլէմիշ տիր:

Շու սօն միւսալէհէ էանասընտա
Սուլթան միլալիմէթ վէ սուհրէր-
վէրիւք կէօթէթմիշ օլտըղընտան,
մէմուլ իտէրիւք քի քէնտի մէմա-
լիքինին իսլահաթ մէսէլէսինի տա-
լի քէնտիսի իճրա իտիպ,
էվրոքանըն միւտախէլէսինէ մա-
հէլ պըրագմաղ:

Բուսիա վէ Աւստրիա տէվէթ-
լէրին մինասիպէթի սիյասիյէլէ-
րինտէն պահս իտիպ տէմիշ տիր:

Շիմօի էվրոքանըն բօլիթիգա-
սընտա պէօլիւք պիր թէպէտալի-
լաթ հուսուլա կէլիշ տիր: զիրա
Բուսիանը վէ Աւստրիանըն Շարգ
մէսէլէսինտէ տիկէր տէվէթլէր-
տէն զիյատէ մէնաֆիլէրի օլտըղը
կիպի, իքիսինին պէյինտէ շիմօի
իթթիֆագ վաղը վէ եէքտիկէրի
ալէհինտէ օլան շիւքհէլէր գալիլ
օլմուշ, վէ հէր պիր մէսէլէ հաղ-
ընտա տօսթանէ միւլէքէթի ի-
տիլիպ, գարար վէրիմէքտէ տիր:

ԶԱԽԻՐԵ ԲԻՍՏԱՍԸ

վաւնա 12 Նոյեմբեր	
Պոռդուայ	
Վալիօն, լիպրա 47-53, հէքթօլ.	
8.70-9.20 ֆրանք	
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ.	
7-10.40 ֆրանք	
Արքա	
Լիպրա 38-41, հէքթօլ. 3.80-4.20	
ֆրանք	
Ֆաստիդա	
100 օգգուսը 19-24 ֆրանք՝ մալա	
կէօրէ	
Մըսլի	
Գուրու, լիպրա 57-58 ֆր. 4.80-5	
լաշ, լիպրա 53-54 ֆր. 4-4.60	
Նարօլէն 20,60 ֆա. հիստալը իլէ	
կիւնտէ 8-10 վալիօն վէ 80-100	
արապա պուլտայ, 30-40 արապա	
արբա, 15-20 արապա ֆասուլա	
վէ 15-20 արապա մըլըր կէլ-	
մէքտէ տիր:	

ՏՊԱՐԱՆ
ԴՐԱՊՈՒՆԻ ԼՐԱԳՐԱՅ

Լրագրիս վերջին երեսի սիւ-
նակներուն մէջ օտար լեզուներով
ալ ազգեր կը գետեղուին: Ա-
ռանձին կը տպագրուին գրքեր,
տետրակներ ու կը պատրաստուին
հայերէն, պուլկարներէն, ֆրան-
սերէն եւ յունարէն լեզուներով
ընկալագրեր, հասցէներ, հար-
սանհաց եւ այլ հրաւիրագրեր,
այցիքարա եւ այլն:

ԳՆԵՐ ԶԱՓԱՒՈՐ

Փափագողք պարտին զիմիլ իւր-
բագրութեան հասցէին:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱԻ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
ԿԱՄ
ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ, կը
պարունակէ շատ մը հին եւ նոր ա-
զատ երգեր, զորս այժմ ժողովորդն
ախորժանօք կ'երգէ:

Փափագողք կրնան ստանալ զայն՝
փոխարէնը 1 ֆրանգի նախակազրոյժ
(բօստի բուլ) իրկելով խմբագրու-
թեանս, կամ զիմիլով հետեւեալ
հասցէներուն:

Տեարք
Արիս Գուրպէթ. Ռուսնուզ
Կարապետ Թօրաղալ. Սիլիստրէ
Խաչիկ Թօհաֆճեան Սիլվէն
Ալէքս. Տէմիրճիպշ. Ֆիլիպպէ
Իսկէնաէր Արալանեան Ծօպրիշ
Յովհաննէս Պիպէնճեան Պուզըշ
Արթ. Տէր Ղուկաս քնյ. Կալայ
Թէօֆիլ Թէրզեան Քէօստէնճէ
Տիգրան Արալանեան Աղէքսանտրիա

Աղգ. վարժարանաց համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուղուի, 20 առ 100
գեղջ կը լինի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱԻ
ՎԱՐԴՈ

ԵՐԵՎԱՆԻ ՍԵՐ
(Վիսակ Հայ Յեղափոխական կեանքի)
ԳԻՆ 1 ՅՐԱՆԲ
Կը ԵՐԵՎԱՆԻ, Վառնա Իրաւունքի
խմբագրատուն, Ֆիլիպպէ Անտօն Գօշի
քով, Ռուսնուզ էֆէ Պօրասանեանի
սրճարանը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱԻ
ԵՐԳԱՐԱՆ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ
ԿԱՄ
Դասագիրք ընթերցանութեան
Ի ՊԵՏՍ
ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ
առաջինն որ լոյս կը տեսնէ հայերէն
լեզուով, կը պարունակէ մանկական
գուրճալի երգեր ու քանի մը ոտա-
նաւոր առակներ եւ կրնայ երախայնե-
րուն ծառայիլ նաեւ իր ընթերցա-
նութեան զիրք որուն պարունակու-
թիւնը զբօսեցուցիչ եւ հրահանգիչ է
միանգամայն անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝
մաքուր եւ կազմը վայելուչ:

ԳԻՆ 80 ՍԱՆԹԻՄ
Կը ծախուի, Վառնա, Արեւիկան
Տպարան, 2րդ. թաղ, թիւ 1104: